

ԱՊՐԵՏԻՔ ԿՆՈՄԱՆԻ

ԶԱՐՄԱՆԱԼԻ ԿԵԱՆՔԸ

(Շար. տե՛ս ըստ. 1954. թ. 3-4, էջ 58)

Հասանք Պետրոս Ապետիքի կեանքի այն մասին, որ վերը յիշուած Քարաֆֆայի խնդրէն վերջ՝ միշտ աւելի կը մօտենայ Հունդարիոյ: Վիեննա ապրող մեծամեծները, ինչպէս Պաթեանիներու ազգական՝ Շթրաթման գանձապետը, ինչպէս նաեւ Ապետիքի բարեկամ բարձրաստիճան եկեղեցականները, որոնք կայսերական մայրաքաղաքը կ'այցելէին, իր ուշադրութիւնը միշտ աւելի կը հրաւիրէին Հունդարիոյ վրայ: Ապետիք շատ աշխատած էր Հունդարիոյ ազատագրումին համար: Իր հակաթրքական զգացումներէն մղուած՝ բընական ուղի մը կը ներկայանար իրեն յարաբերութիւններ հաստատելու Օսմանցիներէն ազատագրուած այդ պետութեան հետ: Բազմաթիւ վաւերացումներ կորսուած են, ուստի ընդհանուր գիծերով միայն կը ճանչնանք Հունդարիոյ համար կատարած իր ընդարձակ գործունէութիւնը, որուն մէկ կամ միւս գիծը՝ հոսկէ հոնկէ հաւաքելով՝ դժուարութեամբ միայն կրնանք վերակազմել:

Կը յիշենք տակաւին թէ Ապետիք ինչ մանրամասնութեամբ կը պատմէր այն ուրախութիւնը զոր պատճառեց Ս. Կոթարտի յաղթութեան լուրը բերող Կոստանդինուպոլսեցի Պարսիկ սուրհանդակը, Շահին արքունիքին մէջ: Հունդարիոյ հին բարեկամը միշտ մեծ հետաքրքրութեամբ եւ ուշադրութեամբ կը հետեւէր Հունդարիոյ մէջ կատարուող դէպքերուն եւ խնդիրներուն: Եւ այս իրողութիւնը կրնանք արդէն տեսնել իր մէջ Պարսկաստան անցուցած շրջանին ալ, որ յետոյ պատճառ եղաւ իր հունդարացի դառնալուն: Այս

ակզբնական համակրութենէն ծնունդ առած է երբեմնի Պարսկահայուն մէջ այդ մեծ ուղեւորութիւնն ու սէրը՝ որուն արտայայտութեան կ'արժէ ծանօթանալ:

Երբ մեր վերակազմութեան աշխատանքին ձեռնարկեցինք, Արքայական Գրքերու մէջ նշանակուած թաղաւորական կալուածի նուիրատուութենէն աւելի Կոմսական վկայագրէն դատ ուրիշ տուեալներ չունէինք ձեռքերնիս:

Շատ բնական է սակայն թէ այսպիսի տուեալներ պէտք էին իրենց նախապատրաստութիւնը ունեցած ըլլալ: Հունդարիա այս շրջանին վիեննայէն կը կառավարուէր, քանի որ մեծագոյն մասը թուրքերուն ձեռքն էր: Իսկ Թրանսիլվանիան առանձին պետութիւն մը կը կազմէր: Այդ երկրամասը որ վիեննա հաստատուած պաշտօնարաններով եւ մասամբ մըն ալ աւատրիացի մեծամեծներու ձեռքով կը կառավարուէր, աշխարհապետական տեսակէտով շատ փոքր հողամաս մըն էր: Պետրոս Ապետիքի Հունդարական Կոմսութեան պատուին բարձրանալու ատեն, Պոլտան տակաւին թրքական ձեռքերու մէջ էր, եւ անկէ երկու տարի վերջ միայն Եւրոպայի քրիստոնէութիւնը կը ցաւ առնել մայրաքաղաքին ազատագրութեան յաղթանակը: Մանաւանդ թէ, ճիշտ այն շրջանին էր որ, 1683-ին, Քարա Մուսթաֆա զօրավարը 250,000-ի հասնող բանակով մը պաշարեւ էր վիեննան: Եւ Յովհաննէս Սոպիէսքիի 26,000-նոց եւ Կարոլոս Լոթարինկիացիի 50,000-նոց բանակներուն օգնութիւնը հարկաւոր եղաւ որ պէսղի Ռիտիկէր Շթարէնպէրկ բերդա-

կալի դիմադրութիւնը յաջող ելք ունենար եւ թուրքերը հալածուէին վիեննայի պարիսպներէն: Այս ծանօթ դէպքերն եղան որ նոյն ժամանակ պատրաստեցին Ապետիքի տրամադրութիւնը՝ Հունդարիոյ մէջ հաստատուելու:

Վիեննան ամենամեծ յուսահատութենէն եւ ամէն տեղէ օգնութիւն խնդրելու տալնապալից մղձաւանջէն՝ յանկարծ ամէնէն մեծ ուրախութեան անցաւ: Սկիզբը հողմավարդի նման ամէն ուղղութեամբ Եւրոպայի պետութիւններուն դիմում կատարուեցաւ՝ քրիստոնէութեան պաշտպանութեան ի նպաստ բանակներ կազմակերպելու համար: Պապը երկու անգամ Իսպահան դրկեց Սերաստիանոս Քնապը, որպէսզի համոզէ Շահը՝ թուրքերու վրայ յարձակելու: Մինչեւ իսկ պատգամաւորներ դրկուեցան Եթովպիայ ու Արարիա նոյն նպատակով: Այս տալնապալից կազմակերպութեան հռոմեոն գործիչներէն մէկն էր Ապետիք. սակայն իր դիւանագիտական գործունէութեան մասին յետոյ միայն պիտի անդրադառնանք, 1680-ի սկիզբները Հունդարիա հաստատուելու իր դիմումը ծանօթացնելէ վերջ: Դէպքերու նկատողութիւնը եւ պատահարներու միութիւնը այսպէս կը պահանջէ:

Երբ թրքական վտանգը հեռացաւ վիեննայէն ու Մեծ Վեզիրը փախաւ իր բոլոր զանձերը թողնելով, հեռացած արքունիքը վերադարձաւ կայսերական քաղաքը: Եւ մենք կ'անդրադառնանք որ այդ շրջանին դիւանական կազմը շատ կրած էր: Խուզարկու ուսումնասէրները ոչ այնքան աւերտրիական՝ որքան հունդարական պաշտօնարաններու դիւաններու մէջ կը գլուխեն այս խառնակ ժամանակներու գործած միասնները: Հունդարական պաշտօնարաններու վաւերագիրները չափազանց պակասաւոր են: Հունդարական ապստամբութիւններու ժամանակ, մանաւանդ հիւսիսային գաւառներու մէջ, ինչպէս օր.

Քաշայի եւ վերին գաւառները կառավարող Սեփեշի պաշտօնարանները՝ քանի մը անգամ փախուստի մատուցան իրենց կայսերապաշտ քարտուղարներով, դիւանադպիրներով, մատակարարներով եւ խորհրդականներով միասին: Շատ բնական է որ այս թափառումներու ժամանակ՝ կորսուած ու ցիր ու ցան եղած ըլլան ազդեցիկ խորհրդականներու տունը հասնող եւ հոն պահուող պաշտօնական թղթակցութիւնները: Փճացում, արիւն, կրակ, փախուստ, չարունակական հակառակութիւն եւ կոիւ թաղաւորական քուլց (ապստամբ) հունդարացիներու միջեւ - ահա պատճառները որոնց համար պրպտող ուսումնասէր մը այսօր դուր տեղ կը փնտռէ Հունդարիոյ Ժէ դարու պատմութեան վերաբերեալ վաւերացութեան մէկ կարեւոր մասը:

Երբ Ապետիքի անձին աշխարհի առջեւ երեւնալուն եւ մանաւանդ իրաւական կերպով Հունդարիոյ կապուելուն կանխող դէպքերը սկսանք պրպտել, դուր տեղ փնտռեցինք զանոնք Հունդարական Ազգային Արդարութեան, Նոտարական եւ Դիւանական հին գրքերու մէջ: Մեր տուեալները, զորս կարելի է ապացուցանել դէպքերու շղթայաշար կապակցութենէն, շատ տեղեր ստիպուած են ենթադրական եզրակացութիւններ հանելով գոհանալ: Վիեննայի պաշտօնարաններու գրութիւններու պրպտումը աւելի արդիւնաւոր եղաւ:

Պէտք ենք իրաւական երկու գործողութիւնները իրարմէ զատել. Ապետիքի շրնորհուած կալուածային նուիրատուութիւնը եւ Կոմսական պատուի բարձրացումը: Թաղաւորական այս երկու ստորագրութիւններուն երկար խորհրդակցութիւններ եւ նամակագրութիւններ կանխած են վիեննայի Արքունիքին մէջ, ինչպէս նաեւ նոյնին ստէպ ուրիշ տեղեր փոխադրուելուն հետեւանքով՝ տեղական

Հունդարական խորհրդարաններուն մէջ ալ: Ինչ որ սակայն այս բոլորէն զբաւոր պահուած է, փոքր մաս մը միայն կը կազմէ:

Պետրոս Ապետիք Հունդարիոյ մէջ կ'ուղէ կալուած ստանալ եւ հոն հաստատուի: Կը փափաքէր ձեռք ձգել Ձալիուկըրոցը, բայց յետոյ Հեւեղ դաւառի ձէօնճէօլիաթան կը ստանայ: Ապետիքի կալուածը ստանալուն նախապատրաստութիւնները հետեւեալներն են:

Ամէնէն առաջ աչքի առջեւ ունենալու ենք որ ո՛չ թէ տեղական միութիւններու անդամ՝ հունդարացի երկրատիրոջ մը հետ է զործերնիս, որ աղբակահներու, բարեկամներու կամ տեղացիներու շնորհիւ առաջուց արդէն կրնար զխանալ թէ ո՛ր կալուածը պիտի ազատի եւ նուիրելի դառնայ. ոչ ալ ճարտար հարկապահանջներու, կամ ընչաքաղց պաշտօնեաներու հետ, որոնք կ'աշխատէին ձեռք ձգել ոչ միայն «Արքունական շնորհ» եւ «Պատրաստ զրամի հատուցում» կոչուածը, այլ նաեւ ուղղակի անշարժ գոյքեր: Պետրոս Ապետիքի տեղեկութիւնները Հունդարիոյ մասին՝ կրնանք վերադրել իբր վարձատրութիւն իր զործունէութեան: Նոյն ժամանակուան պաշտօնարաններու եւ մանաւանդ մեծամեծներու նախասնեակներու մէջ առատօրէն կը գտնուէին արքունի հարստացած պաշտօնեաներ, եւ արուեստով ճարտար լրարեր փաստարաններ: Ուրեմն երբ Պետրոս Ապետիք որոշեց իր աշխատութեան պտուղը ուղել եւ Հունդարիոյ մէջ վայելել իբր Հունդարացի ազնուական կալուածատէր մը, անշուշտ շատ դժուարութիւն կրած ըլլալու չէր — այլ դուցէ աւելի բարի-ձեռք արժամ ըլլայ իրեն — այդ ծանօթութիւնները հաւաքելու՝ թէ արդեօք ո՞ր կալուածը «Jus Regium» (Արքայական իրաւունք) դարձած է: Պարզ խօսքով՝ զխանալ թէ թագաւորէն ո՞ր զղեակիր կամ կալուածը կրնար խնդրել իբր

վարձատրութիւն իր աշխատանքներուն: Ժառանգորդներու պակասի անունով՝ շատ ընտրութիւն չէր կրնար ընել. մինչ ընդհակառակն ժէ դարու երկրորդ կիսուն անհաւատարմութեան ամբաստանութեան տակ՝ կալուածներու զբաւումը շատ սոթալ կը պատահէր:

Ապետիքի առաջին ընտրութիւնը այսպիսի կալուածի մը վրայ ինկաւ: Նա ուղեց հաստատուել Հունդարիոյ Բարձր Նահանգի մայրիկներով, ժայռերով, առուակներով ու ջրվէժներով պնդուած Միջնադարեան-Հունդարիոյ չքնաղ միջավայրին մէջ: Այս տեղը Ձալիուկըրոցն էր: Ձալիներու, Հունդարացի բողոքական այդ հին ընտանիքի ժայռերու վրայ կառուցուած սպիտակ որմերով «Castellum» կոչուած զղեակիրն մէջ կը փափաքէր ոտքի կոճան մը ունենալ Ապետիք: Ձալիները ԺԳ դարէն սկսած հարուստ երկրատէրեր դարձած էին. ընտանիքին փառք ու պատիւը հիմնողը եղաւ Փրանկիսկոս Ձալի, այս զէպքերէն շուրջ հարիւր քսան տարի առաջ. սա Թուրքիոյ մէջ դեսպան եղած է, յետոյ Բարձր-Հունդարիոյ զօրավար: Իր կնոջ ձեռքով ժառանգած է նաեւ Կարա-յիներու առասպելական դանձերը: Ապետիքի ժամանակ այդ ընտանիքի բնակարանը Ձալիուկըրոցն էր: Կոմս Անդրէաս Ձալի, Ստեփան եւ Լաւրենտիոս երեք եղբայրները իրարու մէջ բաժնած էին կալուածը: Անդրէաս Ձալի, որուն կինը Լատիսլաւ Վեչելինիի այրին էր, մասնակցած էր Թէօքէօլիներու ապստամբութեան, ապա կնոջ հետ Լեհաստան փախած, ուր 1685 Փետրուար 14-ին մեռած էր: Ապետիք՝ թագաւորին բարեացակամութենէն խրախուսուած կը փափաքէր ապստամբութեամբ ամբաստանուած Անդրէաս Ձալիի անտէր մնացած կալուածը իբր նուէր ընդունիլ: Վիեննայի կառավարութիւնը իր բարկութեան առաջին նոպային՝ կը կարծէր իրաւունք ունենալ Ձալիուկըրոցը

թագաւորին ձեռքով նուիրել տալու այնպիսի մարդու մը, ինչպիսին Ապետիքն էր — այս բացատրութիւնը վկայականին մէջ ալ յատուկէն կը շեշտուի. — որ Հունդարիոյ շուրջ «անհաւատարմութեան» փոխարէն՝ արժանիքներ զիջած էր: Դժբախտաբար այսօր անգտանելի է Ապետիքի նախնական խնդրագիրը, որ անշուշտ զրուած էր Արքունի Գանձարանի հետ նախապէս ունեցած խորհրդակցութիւններէ վերջ: Սակայն թէ այսպիսի բան մը իսկապէս գոյութիւն ունեցած է, եւ թէ Ապետիք խնդրած ըլլայ Անդրէաս Ձալիի զղեակիր եւ անոր պատկանող կալուածները, ասոր մասին անսխալ տուեալներ կը գտնուին Հունդարիոյ Թագաւորական Գրքերուն մէջ 1684-ին:

Սակայն պարագաները տարբեր դարձուածք մը առին: Անդրէաս Ձալիի տուն մնացած պալատատէրիւնը, իր որդիները, ետեւէ եղան եւ յաջողեցան մնալ Ուկրոցի մէջ: Ձալիուկըրոցի եկեղեցական եւ Ձալի կոմսերու դիւաններէն կարելի է որոշ տեսնել՝ թէ Ապետիք երբեք ոտք կոխած չէ այս կոմսութեան մէջ. այս բանը կը տեսնուի նաեւ Թագաւորական Գրքէն ալ: Նիկողայոս Ձալիի դիւանին մէջ կը գտնուին Անդրէաս Ձալիի նամակներէն շատեր, ուղղուած անհատներու, աղղականներու եւ մինչեւ իսկ Լատիսլաւ Վիտի, Յիսուսեաններու Հունդարիոյ Ընդհանրականին, որոնց մէջ կը համաձայնի Ձալիուկըրոցի դանդաղ մասնական կալուածներու վրայ, զորս վերոյիշեալները թագաւորէն ընդունած էին, յետոյ սակայն ընտանիքին վերադարձուցած՝ որոշ փրկանքի մը փոխարէն: Քիչ յետոյ «Actum in castello Ugrócz»-ի մէջ կը կարդանք, «Ի Տէր հանգուցեալ երբեմնի Յարգոյ եւ Մեծապատիւ մեր Տիրոջ եւ Հօր Զեօմէօրի Ձալի Անդրէասի մեծապատուութեան կալուածներու ժառանգութեան մէջ», թէ ինչպէս անոր որդիները կը բաժնեն իրարու միջեւ վերջնական կերպով:

Ուրեմն Ապետիք, հակառակ Հունդարիոյ հանդէպ ունեցած իր արդիւնքներուն, կորսնցուցած էր Ձալիուկըրոցը: Ձալիները աւելի քան երբեք ապահով նստած էին Ուկրոցի մէջ. ուստի Հունդարիոյ այնքան յարած Ապետիք՝ պէտք էր ուրիշ կալուած մը փնտռել: Սակայն դուր տեղ կը փնտռենք Ապետիքի նոր խնդրագրին թուղթերը. ոչ մէկ տեղ կը գտնենք: Եւ ոչ իսկ Պետրոս Ապետիքի անունին կը հանդիպինք: Եւ ոչ Թուրքերու ձեռքէն վերադարձուած կալուածները վերադարձընողները կամ բաժնողները կը զբաղին Ապետիքով: Ուստի առ այժմ պէտք ենք զոհանալ նուիրատուութեան վկայականով: Միւս կողմէն, Ապետիք ալ ոչ մէկ վկայելիք բան ունէր վերադարձուող հողերու մէջ, քանի որ իր նախնիքներէն ոչ մէկը Հունդարացի երկրատէր եղած էր, այլ հեռաւոր Արեւելքի մէջ ապրողներ: Ուստի շատ հաւանական է թէ նոր նուիրատուութիւններու համար պաշտօնարաններու մէջ բերանացի պատրաստութիւններ կը կատարուէին: Ամէն պարագայի՝ 1684-ի դիւանները եւ ոչ տող մը յիշատակութիւն կը պարունակեն Ապետիքի մասին:

Ապետիքի ընտրութիւնը այժմ կ'իյնայ Թուրքերէն վերադարձուելիք սահմանակից վիճակներուն վրայ: Իր ուշադրութիւնը կը հրաւիրուի Հեւեղ դաւառի Փաթայի կալուածին վրայ(1):

Հին աշխարհագրութիւնները Փաթա կը կոչեն այսօրուան ձէօնճէօլիաթան, որ ձէօնճէօլ վիճակին մէջ կ'իյնայ, համանուն քաղաքէն ոչ շատ հեռու՝ Մաթրա լեռան ստորոտը տարածուելով: 1680-ի չրջաններուն՝ Հեւեղի դաւառական ժողովներն ալ հոս կը կատարուէին: Սա ալ նը-

(1) Աւելի ուշ, Ապետիքի երբեմնի կալուածը՝ Պոստեոն կոմսական ընտանիքին կը շնորհուի, որ զայն ընդարձակած է եւ մեծ կալուածի մը վերածած: Սակայն այս ընտանիքն ալ անժառանգ մնացեր է. եւ այսօր Ապետիքի կալուածը բաղձաթիւ փոքր կալուածատէրերու մէջ բաժնուած է:

կարչադեղ տեղ մըն է. կը տարածուի Հաւաշ, Վարհէճ ու Քեչքեքէօ լեռներու ծաղկազարդ հովիտին մէջ, Ար ու Նաճ գետակներու եզերքը: Հունգարական հին վիճակ մըն է. անունը առած Փաթայէն, Ապայի պաշտօններէն մէկէն, որ դեռ 1100-ի ատենները բերդ մը կառուցանել տուած էր այդ վիճակին մէջ: Դարեր վերջ, էկէրի ալ թուրքերու ձեռքն իյնալէն յետոյ, իբր անուանի եւ արգաւանդ կալուած մը՝ Սուլթանին կալուածներուն կցուեցաւ. եւ հետեւաբար Վէզիրի զիւմէթ-ին կը պատկանէր: Ժէ դարուն, Ապետիքի խնդրագրէն շուրջ 15 տարի առաջ, 1669-ին Փրանկիսկոս Համայնի քաղաքատեղի մահէն վերջ, Փաթան՝ Ադամ Փորկալ-ի նուիրուեցաւ: Հեւեչ դաւառին մէջ, այս շրջանին, թուրք-հունգար առանձնայատուկ կեանք մը գոյութիւն ունէր. գիւղերու մէջ հունգարացի երկրատէրեր կը տիրէին՝ թուրք պաշտօնականներու ձեռքին տակ: Միայն 1689 Հոկտեմբեր 16-19ի շրջանին, Հեւեչ դաւառը քրիստոնեայ բանակին ձեռքը անցաւ առանց սուրի հարուածի միակ: Գիւղերու մէջ, ու նաեւ քաղաքներու մէջ ալ շատ թուրք ընտանիքներ հաստատուած էին, որոնց սերունդները այսօր ալ կ'ապրին:

Առաջին կարեւորութեան ի դերեւ ելլելովը, մշտական ճամբորդ եւ ծերանալու մօտեցող Ապետիք՝ հոս կ'ուզէր հաստատուիլ ու հայրենիք մը գտնել: Փաթայի նրա իրատուութեան նամակը ստորագրած է Լէօփոլտ, 1684 Յունուար 14-ին, Լինցի մէջ, իբր թագաւոր Հունգարիոյ: Այս վրկայաթուղթին մէջ սա կալուածը համարժէք կը նկատուի Անդրէաս Զայիի կալուածներուն, որոնց նախապէս փափաքած էր Ապետիք: Եւ մանաւանդ թէ կոմսութեան բարձրացումի հետ կապ ունեցող «Փաթացի» մակդիրն ալ կ'ընդունի: Թէեւ նուիրատուութեան հետեւանքով ինքը կըրնար ինքզինք նոյնպէս «Փաթացի» կոչել, այնու համարժէք վաւերագրին մէջ յատու-

Լ Ո Ւ Ի Փ Ա Ս Տ Է Օ Ռ

(1822 - 1895)

ԻՐ ԿԵԱՆՔՆ ՈՒ ԳՈՐԾԸ

(Շար. Բագմ. 1955, թիւ 1-2, էջ 21)

2.

Դափնիներու շուքին տակ

Միթէ փառքի ու պսակի պէտք ունէ՞ր Փաստէօն: Ան՝ մանկութենէն մինչեւ կենացը վերջին օրը՝ կենքը կը բոլորէր զափնիներու շուքին տակ, համակ մարդկութեան յարաճուն երախտիքին արժանանալով: Ճիշտ է, երկար ժամանակ հալածուեցաւ ու նախատուեցաւ, բայց վերջ ի վերջոյ, երբ մարդիկ կ'անդրադառնային այդ հանճարին բացառիկ արժանիքներուն, կը մոռնային այլեւս ամէն թըշնամանք, ու կենացը վերջին օրերուն՝ արժանաւորապէս կը յարգէին ու կը պատուէին զայն:

Այս մեծ մարդուն կենսագրականը վերջացնելէ առաջ, կ'արժէ որ պահ մըն ալ վայելենք իր յաղթանակի օրերուն պերճանքը եւ ոգեւորուինք անոնց վեհութեամբը:

Բագմաթիւ առիթներով, ինչպէս որ տեսանք, Փաստէօն անձն ու անունը բացառիկ մեծարանքներու կ'արժանանային: Արքաներէն սկսեալ մինչեւ յետին գիւղացին ու հովիւր, քանիցս իրենց յարգանքն ու երախտիքը կը մատուցանէին այս մարդուն:

Կէն կը յիշատակուի սա: Ուրեմն այսպէս սով Ապետիք Հունգարացի կալուածատէր եղաւ:

Թրգմ. Հ. Ա. ՖՈԿՈԼԵԱՆ
(Շարունակելի)

Ի մասնաւորի կատաղութեան դէմ մըրդած պայքարին եւ ձեռք բերած զգայացունց յաղթանակներուն շնորհիւ, մեծապէս կը բարձրանար Փաստէօնի հանճարին հմայքը:

Այդ գիւտէն ետքն է որ Փաստէօն երիցս կը փառաւորուէր, ու մասնաւոր յիշատակութեան արժանի եւ 1885ի, 1886ի եւ 1892ի շքեղ հանդիսակատարութիւնները:

Առաջինը՝ տեղի կ'ունենար 26 Հոկտ. 1885ին, Գիտութեանց Կաճառին մէջ: Այդ նիստի ընթացքին էր որ Փաստէօն կը հրապարակէր կատաղութեան դէմ դաւաճող մանր, գիտնականներու ջրախումբին առջեւ, ու կը յայտարարէր փոքրիկ Մէսթրի վրայ կատարած մարդկային առաջին յաջող փորձը:

Վիւրբանի ոտքի կանգնելով, հետեւեալ ներողական կը բանաձեւէր. «Բժշկական ու վիրաբուժական յանձնարարութեան անդամի հանդամանքովս կը յուսամ, թէ Կաճառը ինձ թոյլ պիտի տայ խօսք առնելու եւ արտայայտելու հիացման զգացումներս, որոնք պարոն Փաստէօնի հաղորդագրութիւնը ինձ ներշնչեցին: Կանխաւ վստահ եմ, որ համայն բժշկական դասը մասնակից պիտի ըլլայ այս զգացումներուն:

«Կատաղութիւնը՝ այդ ահուկի հիւանդութիւնը՝ որուն դէմ կիրարկուած բոլոր դարմանումները ապարդիւն անցած էին մինչեւ այսօր, վերջապէս բուժելի դարձած է: Պարոն Փաստէօն՝ որմէ առաջ ոչ ոք ընթացած էր իր որդեգրած ճամբէն՝ առաջնորդուեցաւ, շնորհիւ շարք մը յարատեւ պրպտումներու, որոնք տարիներ տեւեցին, յղանալու որոշ դարմանակերպ մը, որուն շնորհիւ՝ վստահօրէն կարելի է արդիւնէ կատաղութեան ընթացքը, նոր վարակուած հիւանդի մը քով»:

Վիւրբանի կը յաջորդէր Պուլէյ. «Իրաւունք ունինք յայտարարելու, կ'ըսէր ան, թէ այս օրուան նիստը յաւէտ յիշատակութեան արժանի պիտի մնայ, թէ՛ բժշկու-

թեան պատմութեան եւ թէ Քրանսական գիտութեան տարեգրութեանց մէջ, որովհետեւ այն կը մարմնացնէ բժշկութեան մէջ մինչեւ ցարդ չտեսնուած մեծագոյն յառաջադիմութիւններէն մին, որ կը ձգտի դարմանել այնպիսի հիւանդութիւն մը, որ աշխարհիս սկիզբէն ի վեր՝ դարերու հոլովոյթին համընթաց՝ մեղի կը կտակուէր իր անդարմանելիութեամբը: Այս օրուրնէ սկսեալ, մարդկութիւնը կատաղութեան ճակատագրականութեան դէմ պայքարելու, եւ անոր չարադուշակ հետեւանքները կանխելու աղեղնիկ միջոցով մը զինուած է:

«Պարոն Փաստէօնի կը պարտինք այս բարիքը, եւ որքան ալ հիացում ու երախտիք յայտնենք, այն ճիւղերուն համար որ այսքան զեղեցիկ արդիւնքներով պսակուեցան՝ քիչ է: Մեծ աղբի մը համայն մտաւորականութեան անունով, եւ անոր բարձրագոյն ատեանէն արտասանուած վերոյիշեալ արտայայտութիւններուն եւ գնահատանքներուն առջեւ, կը նաեմանան արքայական շքանշաններու փայլը, ինչպէս նաեւ ոսմիկին կողմէ արձակուած թըմբկահարութիւններուն որոտը»:

Իրենց սրտաբուխ պարգուութեամբ իսկ, գիտնականներու բերնէն ելած այս զեղեցիկ դրուագները բաւական էին արդէն անմահացնելու Փաստէօնի հանճարը:

Այլեւս կարելի էր մի միայն կաճառներու պատերուն մէջ արգելափակել Փաստէօնի փառքը: Հանրութիւնն ալ, իր ընտրելագոյն ներկայացուցիչներովը, նախաձեռնարկ կը հանդիսանար փառաբանելու զայն, 1886-ին, աննախընթաց շուքով ու տօնակատարութիւնով մը:

Ան՝ տեղի կ'ունենար Թրոքատերոյի ընդարձակ ու շքեղ դահլիճին մէջ, Փաստէօնի ակադեմական բարեկամներու հովանաւորութեան ներքեւ, ու Շառլ Ռիչէի եւ Կասդոն Տիսանդրէի նախաձեռնութեամբ:

Այդ օրը, մեծահոգակ արուեստագէտ-